

ՀԱՅԱՍՏԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՏԱՐԱԿՈՒԹՅՈՅԻ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ  
ԽՍՀՄ ՍՆՈՒՆԴԱՐԴԺՈՂԿՈՄԱՏ — ԳԼԱՎՏԱՐԱԿ

ԸՆԿ. ՄԻԿՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԾԽԱԽՈՏԻ ՑԵՎ. ՄԱԽՈՐԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՐԵ-  
ՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՄՈՒԹԵՆԱԿԱՆ ԳԻՏԱԶԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍԻՑՈՒՏ ՎԻՏԻՄ

Հրատակարյուն № 19

ԾԽԱԽՈՏԻ  
ՎՆԱՍԱՏՈՒ ՄԻԶԱՏՆԵՐԸ  
ԴԱՅՏՈՒՄ

(ԱԳՐՈՏԻ ՑԵՎ ԱՎԱԶՈՒՏԱՅԻՆ ՄԵԴԱԱԿ)

30 JAN 2018

ՅԱՎԱՆՈՏԻ ՎԵՍԱՎՈՒ ՄԻԶԱՏՆԵՐԸ ԴԱՇՈՒՄ  
ԱԳՐՈՏԻ ՅԵՎ ԱՎԱԶՈՒՏԱՅԻՆ ՄԵԴԼՅԱԿ

Սոցիալիստական ծխախոտագործության հիմքա-  
կան նպատակն ե՝ բարձրացնել ծխախոտի լեռքի քա-  
նակն ու վորակը:

Այս խնդիրը չի կարող կատարվել, յեթե պլա-  
նաշափ պայքար չմղվի այն վեասատու միջատների  
գեմ, զորոնք լերբեմ բերքի ափելի քան 25 տոկոսը  
վնասում և զորակն զգալի չափով վատացնում են:

Ծխախոտը դաշտում տնկելու առաջին որերն  
ամենաշատ վնասը հասցնում են աղբոտիսը (սովոր) և  
ավագուտային մեղլյակը:

## ԱԳՐՈՏԻ

Ագրոտիսը գիշերային փոքրիկ թիթեռ և Նըա  
առջնի թիթեռ մոխրագույն-գորշ կամ մուգ-գորշ  
գույնի լեն, յերկու ընդմիջող ալիքավոր գծերով և  
բողբոջածե, կլոք ու սեպածե բծերով (խալերով): Հե-  
տեւի թերեք բաց գույնի—համարյա սպիտակ են:

Թիթեռներն սկսում են թռչել մայիսին: Զաւ-  
գավորումից հետո թիթեռներն սկսում են ձու դնել:  
Զվերը շատ մանր են, գնդածե, թեթևակի տռփակ:  
Նոր դրած ձվերը կաթնասպիտակվուն դույնի յեն,

Թթվուրը դուրս դալուց առաջ նրանք դառնում են սև կապտագույն:

Թիթեռները գլխավորապես մոլախոտերի վրա կամ նրանց մոտ՝ ուղղակի հողի վրա յեն ձու զնում:

Հատ հաճախ ձվերը դնում են պատառեկի, բաղեղի, տատասկափշերի, ջղուախոտի և այլ մոլախոտերի վրա, վորոնք այն տերեներ կամ վերնարժատային փունջ ունեն: Ենքնեմ ձվերը դնում են նաև կուլտուրական բույսերի վրա: Ծիախոտի վրա ազդութիսի ձվիկները հազվագյուտ դեպքերում են լինում:

Մի թիթեռն իր ամրողջ կյանքի ընթացքում մոտավորապես 800 հատ ձու յեղում:

5—10 օրվա ընթացքում, նայած յեղանակին, ձվիկների միջից թրթուրներ են դուրս գալիս:

Սկզբնական շրջանում թրթուրները բաց ապրում են այն բույսերի վրա, վորակղ նրանք առաջ են յեկել Սնկելազ տերեներով՝ նրանք կրծքավ տերեների վրա ծակոտիներ են առաջացնում կամ տեքելի հյուսվածքն են ուտում, չգիպչելով ներքնի կամ վերեի մաշկին: Մեծահասակ թրթուրները կերակրվում են միայն գիշերները, իսկ ցերկն անց են կացնում հողիմեջ:

Ծոլախոտերի վրայից թրթուրներն անցնում են կուլտուրական բույսերի վրա, վորոնց թվում և ծխախոտի վրա: Դաշտում նոր տնկած ծխախոտի սածիլները նրանք կրծում են հողի անմիջական յերեսից, այնունետև ուտում են տերեները և ցողունի մտար: Այն տարիները, յերբ ագրութիսը մասսայական չափով և յերեսում, տնկած ծխախոտի վնասվածքն այնքան խոզը և լինում, վոր սպազմած մեն լինում վնասված

սածիլներն առնկազ 2—3 անգամ փոխելու նորից տնկել:

Յերբ ծխախոտի ցողունները կոպտանում են, թրթուրներն այլևս չեն կարուժ, այլ կըծառում են: Այսպիսով, վնասված բույսերի աճումը լիու և մուտք ու խիստ քամիների դեպքում կոտրատվում են:

Թրթուրների կյանքը 30—40 որ և տեսմ:

Մեծահասակ թրթուրները փայլուն գլանցանման, կեղտոտ մոխրագույն են լինում: Մեջքի ուզդությամբ անցնում են յերեք վոչ պարզ, ավելի մուգ գծեր: Մեծահասակ թրթուրի յերկարությունը մոտավորապես 50 միլիմետր է, իսկ հաստությունը՝ 7 միլիմետր:

Իրենց զարգացումն ավարտած թրթուրները հողի մեջ 10—30 սանտիմետր խորության վրա բուն են պատրաստում, վոր ուղղ հեպագայում կերպարանափոխում հարսնյակ են դառնում: 2—3 շաբթից հետո հարսնյակներից թիթեռներ են դուրս գալիս: Հյուսիսային կովկասում թրթուրները հուլիսի վերջին են դուրս գալիս:

Այդ սերնդի թիթեռներն իրենց հերթին ձվիկները մոլախոտերի վրա յեն դնում և գլխավորապես թրթուրների նոր սերունդն է զարգանում:

Մեկ տարվա ընթացքում տեղի յեղուննում թիթեռների 2—3 սերունդ:

Վերջին սերնդի միջահասակ թրթուրները ձմեռում են հողի մեջ վոչ խորը և հարսնյակ են դառնում հաջորդ տարվա գտրնանը:

1-354594

## ՊԱՅՔԱՐԻ ՄԻԶՈՑՆԵՐԸ

1. Այս դաշտերում, զորտեղ նախառեսված և ծխախոտ՝ տնկել, տնկելուց 3—4 շաբաթ առաջ մոլախոտերը պետք եւ վոչնչացնել: Միջնակներում աճող մոլախոտերն այդ ժամանակամիջոցում հնձված պետք եւ լինեն:

2. Սածիլ տնկելուց առաջ ազրոտիսի թրթուրներ հայտաբերելիս անհրաժեշտ եւ թեփից, կերի ձակնդեղից կամ բամբակի քուսպից պատրաստած թունավոր գրավչանյութ շաղ տալ:

Ճակնդեղից գրավչանյութ պատրաստելու համար 750 գրամ փարփղան կանաչ լուծում են 12 լիտր սիրոպ (շարապ) պարունակող ջրի մեջ: Ստացված խառնուրդին 200 կիլոգրամ մանր կոտորած կերի ճակնդեղ են ափելացնում: Հստ զորում մանրունքը լավ և դպուշությամբ խառնում են իրար, վարպետի փարփղան կանաչի մսանիկներն անպայմանորեն կպչեն ճակնդեղի աքեն մի կառրին: Ճակնդեղի փոխարեն կարելի լի վերցնել մոլախոտ, բայց վերջինս թիթեռի թրթուրների համար այքան ել գրավիչ չեն:

Փշրանքից (թեփից) կամ բամբակի քուսպից գրավչանյութ պատրաստելու համար մի կիլոգրամ փարփղան կանաչը լուծում են 30 լիտր ջրի մեջ և այդ լուծույթն անընդհատ խառնելով վրան 50 կիլոգրամ ալյուրի թեփի են ափելացնում կամ մանրած բամբակի քուսպ:

Այս կամ այս ձեռվ պատրաստած գրավչանյութը շաղ են տալիս ամրող դաշտը կամ փոքր կույտերով դորսում ու խոտով ծածկում են: Մեկ հեկտարի հա-

մար մոտավորապես 100 կիլոգրամ կտորանք և պահանջվում (ճակնդեղի, կամ 30—40 կիլոգրամ թեփ, կամ թե քուսպ):

3. Ծխախոտ տնկած տեղի մոտ աճող ագրոտիւրթուրներով վարակված մոլախոտերին փարփղան կանաչի և հանգած կրի խառնուրդ պետք եւ սրսկել Մեկ մաս փարփղան կանաչին 5 մաս հանգած կրի են վերցնում: Այս խառնուրդն զգուշութիւնը խառնում, հետո սրսկով մեջքենայի ձեղջողով սրսկու են:

4. Դաշտում տնկած ծխախոտը թրթուրներից վնասված լինելու դեպքում, վնասված մասերին փարփղան կանաչի և չոր, փոշենման հանգած կրի խառնուրդ են սրսկում: Մեկ մաս փարփղան կանաչին 10 մաս կրի են վերցնում:

Յերբ ուրիշ դաշտերից թրթուրների փոխանցման վատանգ և սպանում, ծխախոտ տնկելու դաշտը շրջապատում են մոտավորապես 20 սանտիմետր խորությամբ առաներով; Կամ խոր ակոսով: Առվի կամ ակոսի մեջ անհրաժեշտ եւ թունավոր գրավչանյութ շաղ տալ:

6. Գարնանը, թիթեռների թռչելու ժամանակ, ոգտակար ե նրանց վարսալ գոշապե հեղուկով: Ջրով լուծված սիրոպը (1 մաս գոշապին 1 մաս ջուր) լցնում են տաշտակների սեղ և դնում ծխախոտի հարեան դաշտերը: Տաշտակները պետք եւ գնել գետնից 70 սանտիմետր բարձրության վրա: Յուրաքանչյուր մեկ հեկտարին մեկ տաշտակ եւ դրվում: Թիթեռները թոշում են գեպի գոշապի հեղուկը և խեղդվում նրա մեջ:

## ԱՎԱՋՈՒՏԱՅԻՆ ՄԵԴԼՅԱԿ (ՄԱՀԱԳՈՒՇԱԿ)

Սևամորթ բգեղի թրթուրը տեսքով քիչ նման է լարաթրթուրին, այս պատճառով եթ նրան անվանում են կեղծ-լարարքուր։ Սևամորթներից բոլորից շատ ծխախոտի դաշտերում հանդիպում են ավազուաային մեղլյակը։

Ավազուտային մեղլյակը 7—9 միլիմետր յերկարությամբ մի փոքրիկ բգեղ ե։ Նրա մաքմինը յերկարավուն-ձևաձև ե, սե-մուլգ-մոխրագույն, թեապանակները՝ յերկար ուսուցքավոր, յերկարաձև գլանով, կողքերը՝ փոքր բարձրությամբ։

Բղեղները յերեսում են վաղ գարնանը։ Առաջին իրկ տաք որերին նրանց կարելի յե նկատել բաց և լավ լուսավորված վայրերում, վորտեղ զուրկ ե բռւսականությունից։ Բղեղները կերակրվում են զանազան բռյայերով և յերենմ շատ ուժեղ վնասում են ծխախոտի տերեները։ Զաւգավորումից հետո եգերը հողի մեջ փոքր ձգեր են ածում։ Զվիկների միջից դուրս յեկած թրթուրները կերակրվում են արմատներով կամ հողի տակ մացած զանազան բույսերի ցողունների մասերով, վօրոնց թվում՝ և ծխախոտի։ Թրթուրները ծխախոտի ցողունի կեղելը կրծուում են, վորի հետեւանքով ծխախոտի աճն սկզբում յետ ե պաւմ, իսկ հետո ցողունը չորանում ե։

Թրթուրների աճելն ու կերակրվելը տեսում ե մոտ 50 որ։ Ավազուտային մեղլյակի մեծահասակ թրթուրը յերկարավուն գլանակադրաձև ե, ուսուած գլխով և լավ

նկատելի վերին շրթունքով։ Առջեի վոտքերը բավականին յերկար են և ավելի հաստ, քան մնացած ները։ Թրթուրը մոխրագույն ե, կամ գորշ-մոխրագույն, թրթուրի լերկաբությունը մինչև 20 սանտիմետր ե.

Թրթուրները հարսնյակ են դառնուած հողի մեջ, և 2 շաբթից հետո հարսնյակներից բղեղներ են դուրս գալիս։ Բղեղները ձմեռում են և հաջորդ գարնանը ձու դնում։

## ՊԱՅՔԱՐԻ ՄԻԶՈՑՆԵՐԸ

Ավազուտային մեղլյակի դեմ պայքարը, վորքան հարաբվոր ե զուտ պետք ե սկսել, հենց վոր բղեղները նկատելի չափով յերեան։ Բղեղների վոչչացման համար դործ են ածում թեփից պատրաստած թունավոր գրավչանյութեր։ Մեկ կիլոգրամ փարիզիան կանաչը լուծում են 30 լիտր ջրի մեջ և ստացած խառնուրդն անընդհատ խառնելով՝ 40 կիլոգրամ թեփ են ավելացնում։ Գրավչանյութը դաշտում կույտեր են դնում ու խոտով կամ հողի կնծիկներով ծածկում։ Մեկ հեկտարին աներաժեշտ ե մոտավորապես 40 կիլոգրամ թեփ։ Այդ նույն գրավչանյութն ոգտագործվում ե նաև թրթուրների վոչչացման համար։ Այդ նպատակով գրավչանյութը  $1\frac{1}{2}$ —2 սանտիմետր խորությամբ դնում են ակուների մեջ ու հողով ծածկում

Քաղ. Խմբագիր՝ Հ. Փ ա ս պ ա ը յ ա ն  
Մասն. Խմբագիր՝ Գ. Բ. Ա զ ա մ ա լ յ ա ն  
Տեխ. Խմբագիր՝ Հ. Մ ու բ ա զ յ ա ն  
Սըբագրիչ՝ Պ ա ր. Հ ա կ ո բ յ ա ն

Դրավիկտի լիազոր № 1114 էրտ. № 374 պատվ. 640 տիրած 500  
Հանձնված և արտադրության 1936 թ. սեպտեմբերի 15-ին  
Սորության և ապելու 1936 թվի հոկտեմբերի 1-ին

Գյուղեցատի ապարան, Յեղեռն Նալբանդյան 11

ՀՀ Ազգային գրադարան



NL0404873

11 OKT. 1936

669

1

3545